«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԳ» ՓԲԸ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Առ 01.10.06թ. դրությամբ Ընկերության գազի համակարգի հաշվեկշռում առկա են՝

- 1753,47 կմ մայրուղային գազատարներ,
- 11474.36 կմ բաշխիչ ցանց:

Այսօր Ընկերության կողմից շահագործվող գազաբաշխիչ ցանցի երկարությունը կազմում է 11573 կմ:

Իրան-Հայաստան գազամուղը Իրանի բնական գազի փոխադրման եւ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ փոխադրման համակարգերը միացնող 40կմ երկարությամբ գազամուղ է ( եթե համեմատենք նշված 40կմ-ը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հաշվեկշռում գտնվող միայն մայրուղային գազատարների երկարության հետ, ապա այն կկազմի ընդամենը 2.3%):
Գոյություն չունի Իրան-Հայաստան գազատարի երկրորդ հատված: Խոսքը գնում է միայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գազափոխադրման համակարգի ընդլայնման (թողունակության բարձրացման) մասին, ինչը հնարավորություն կտա իրանական գազի պայմանագրային քանակությունները փոխադրել մինչեւ Երեւանի եւ Հրազդանի ՋԷԿ-եր: Ընդլայնման հետ կապված նախագծային եւ շինարարական աշխատանքները իրականացնում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն:

**Աբովյանի գազի ստորգետնյա պահեստավորման կայան**

Պահեստավորված գազի ծավալը ըստ տարիների

| î ³ ñÇ | Ð ³ ßí » ï áõ ï ³ ñí ³ ÁÝÃ ³ óùáõÙ ³ é ³ í »É ³ ·áõÛÝ · ³ ½Ç å ³ Ñ»ë ï ³ íáñí ³ Í Í ³ í ³ ÉÁ [ÙÉÝ. Ù$^{3}$] |
|---|---|
| 2002 Ã. | 36,2 |
| 2003 Ã. | 64,9 |
| 2004 Ã. | 85,0 |
| 2005 Ã. | 89,1 |
| **2006 թ.** | **110,0** |
| **Նախատեսված է մինչեւ 2009 թ.** | **150,0** |